ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 11 հունվարի 2019 թվական

Արձանագրություն N 1

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

Նախագահ՝ Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան

Ներկա էին խորհրդի 9 անդամներից 8-ը:

Բացակայում էր՝ Արմեն Հայրապետյան:

Հրավիրվածներ՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Արթուր Մկրտչյան և ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի փորձագետ Տարոն Հակոբյան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հավանություն տալ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում և պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019 թվականի ստուգումների տարեկան ծրագրի հաստատում:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

3. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության ծրագրի հաստատում:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյան

ՈՐՈՇԵՑԻՆ – հաստատել օրակարգը:

կողմ 8

դեմ 0

1. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանի զեկուցումը՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում և պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելու մասին: Ա. Կոտոյանը մանրամասն ներկայացրեց Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում և պաշտոնների անձնագրերում առաջարկվող փոփոխությունները և դրանք կատարելու անհրաժեշտությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի անդամներ Արտակ Ասատրյանը և Հայկ Այվազյանը: Ա. Ասատրյանը հետաքրքրվեց, թե որն է պատճառը տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներից թվով երկու բաժինները փոխել վարչության: Հ. Այվազյանն ի պատասխան նշեց, որ մեթոդաբանության և վարձատրության խնդիր է առաջանում և առաջարկեց հավանություն տալ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում և պաշտոնների անձնագրերում առաջարկվող փոփոխություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում և պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն:

կողմ 8

դեմ 0

2. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանի զեկուցումը՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019 թվականի ստուգումների տարեկան ծրագրի վերաբերյալ: Ա. Կոտոյանը ներկայացրեց ծրագիրը՝ նշելով առավել բարձր ռիսկային ընկերությունների ներգրավված լինելը ըստ քանակների և ոլորտների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի անդամներ Մելիտա Հակոբյանը, Հայկ Այվազյանը և Ալբերտ Բաբայանը: Մելիտա Հակոբյանը հետաքրքրվեց, թե արդյոք Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից վերահսկողության ենթակա են բրենդային արտադրանքների կեղծված լինելը: Հ.Այվազյանը պատասխանեց, որ տեսչական մարմնի աշխատակիցները պաշտոնի անձնագրով և լիազորություններով լիազորված չեն, այլ վերջիններս հսկողություն են իրականացնում ոչ պարենային արտադրանքի անվտագության ապահովման նկատմամբ՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:

Հ.Այվազյանն առաջարկեց վերանայել կերամիկական արտադրանքի վերաբերյալ ստուգումներն ու մեթոդաբանությունը: Նա առաջարկեց նաև կատարել համապատասխան հարցում ՊԵԿ՝ ՀՀ տարածք ցեմենտի ներկրման վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում դիմել ՀՀ վարչապետին՝ նշված ոլորտում ստուգումներ իրականացնելու համար:

Արմեն Կոտոյանը պատասխանեց, որ ոչ պարենային արտադրանքների այն ոլորտները, որոնց վերաբերյալ ՊԵԿ-ից ներմուծման տեղեկատվություն չկան՝ ընթացքում կարող են իրականացվել ստուգումներ:

Ալբերտ Բաբայանն առաջարկեց հաստատել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը:

կողմ 8

դեմ 0

3. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանի զեկուցումը՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության ծրագրի վերաբերյալ: Արմեն Կոտոյանը ներկայացրեց շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության ծրագիրը: Նա նշեց նաև, որ ԱԳԼՃԿ-ների տնօրենների հետ հանդիպման ժամանակ ոլորտի տնտեսվարողները մտահոգություն են հայտնում գազի վաճառքը **«մ³»**-ի փոխարեն **«կգ»-ով** իրականացնելու առնչությամբ (քանի որ գազն իրենց վաճառվում է **«մ³»**-ով) և առաջարկել են, որպեսզի գազն իրենց նույնպես վաճառվի **«կգ»-ով**:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի անդամներ Հայկ Այվազյանը և Կարեն Սահակյանը: Հ. Այվազյանը նշեց, որ ԱԳԼՃԿ-ներում գազի վաճառքը **«կգ»-ով** իրականացնելը օրենքի և տեխնիկական կանոնակարգի պահանջ է և առաջարկեց առաջին ստուգվող ԱԳԼՃԿ-ի վերաբերյալ խորհրդին ներկայացնել ստուգման արդյունքը: Առաջարկեց նաև ավտոմոբիլային բենզինի ոլորտի կարգավորման առաջարկ ներկայացնել: Կ. Սահակյանի կողմից առաջարկվեց ներկայացնել լուծման տարբերակ՝ ԱԳԼՃԿ-ների բաշխիչ աշտարակների ցուցատախտակի հսկողություն կամ փոխարինում՝ բացառելով մարդկային գործոնը:

Հ. Այվազյանն առաջարկեց տեսչական մարմնի բուկլետների համար հստակ առաջարկ ներկայացնել՝ արդյունավետության, որակի և քանակի մասով, որով հնարավոր կլինի խորհրդի կողմից հետագայում կատարել ուսումնասիրություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև առաջարկեց իրազեկման ծրագրով սոցիալական ցանցերում աշխատանքներ իրականացնել:

Խորհրդի անդամների կողմից առաջարկվեց հաստատել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության ծրագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

կողմ 8

դեմ 0

Խորհրդի նախագահ՝ _____ **Տիգրան Խաչատրյան**

Խորհրդի անդամներ՝ _____ **Հայկ Այվազյան**

_____ **Ալբերտ Բաբայան**

_____ **Մելիտա Հակոբյան**

_____ **Աբգար Մկրտչյան**

_____ **Կարեն Միրզաբեկյան**

_____ **Կարեն Սահակյան**

Քարտուղար՝ _____ **Սուրեն Պետրոսյան**